

Արդէն ժԸ. դարուն Վենետիկի մէջ լոյս տեսաւ Հ. Միքայէլ Չամչեանի եռահատոր կոթողային գործը՝ «Պատմութիւն Հայոց»ը: ԺԹ. դարուն հիացում կը պատճառեն Հ. Ղեկոնդ Ալիշանի բազմաթիւ ու մեծահատոր գրութիւնները Հայագիտութեան բոլոր մարզերուն մէջ:

Նշուած այդ գործերը սակայն գրուած են աւանդութեան հանդէպ դեռ միամիտ հաւատքով: Բայց 1840-նական թուականներուն Վիեննայի Մխիթարեաններու մօտ, գերմանական գիտական մթնոլորտի ազդեցութեամբ, արթնցաւ քննական ոգին, եւ Հ. Յովսէփ Գաթրճեան այդ ոգիով գրեց իր «Տիեզերական Պատմութիւն»ը եւ առանջին անգամ ըլլալով՝ ան ընդհանուր պատմութեան մէջ հիւսեց նաեւ Հայոց պատմութիւնը:

1887 թ. Վիեննա «Հանդէս Ամսօրեայ» թերթի հրատարակութեամբ սկիզբ առաւ Հայագիտական ուժեղ շարժում մը: Այդ թերթը շուտով վերածուեցաւ զուտ Հայագիտական ուսումնասիրութիւն - այդ ժամանակ միակը իր տեսակի մէջ Հայութեան մօտ - եւ դարձաւ Հայագիտութեան կենդրոն, որուն շուրջ հաւաքուեցան թէ՛ Հայ, թէ՛ օտար բազմաթիւ Հայագէտներ: Նաեւ «Բազմավէպ»ը, որ 1843 թ.էն սկսած կը հրատարակուէր, հետզհետէ զարգացաւ Հայագիտական ուղղութեամբ: Երկու թերթերն ալ, որոնք լոյս կը տեսնեն մինչեւ այսօր, շատ մեծ նպաստ բերած են Հայագիտութեան:

7) Կրթական աշխատանք

Մխիթարեան առաջին դպրոցը սկսած է 1746 թ. դեռ Մխիթարի կենդանութեան, Թրանսիլուանիայի Պաշպալով քաղաքը (այժմ Ռումանիա): Իսկ ժԹ. դարէն սկսած

Մխիթարեանները վարած են բազմաթիւ դպրոցներ հայաշատ շրջաններու մէջ, հայրենիքէն ներս ու դուրս: Շատ յայտնի անձնաւորութիւններ, որոնք կարեւոր դեր կատարած են վերջին 200 տարիներուն Հայ ժողովուրդի կեանքին մէջ, Մխիթարեան վարժարաններու աշակերտներ են:

8) Մշակոյթի եւ արուեստի գանձերու խնամքով հաւաքում ու պահպանութիւն

Վենետիկի եւ Վիեննայի Մխիթարեան վանքերը իրենց մատենադարաններով ու թանգարաններով սփիւռքի մէջ Հայ մշակոյթի մեծագոյն կենտրոններն են: Երկու մատենադարաններէն իւրաքանչիւրը ունի շուրջ 150,000 հատոր տպագիր մատեան՝ շատ մեծ մասը Հայերէն լեզուով, անկէ զատ շուրջ 4000 ձեռագիր Վենետիկի եւ 2,500 Վիեննայի մէջ:

Վիեննայի մատենադարանը կը պահպանէ Հայ մամուլի մեծագոյն հաւաքածոն ամբողջ աշխարհի վրայ, իսկ թանգարանը՝ Հայկական դրամներու մեծագոյն ժողովածոն, եւ անկէ զատ հարուստ ժողովածուներ նկարներու, սրբազան առարկաներու, Հայկական գորգերու, ազգային տարազներու, Հայկական յախճապակիի, արծաթի վրայ կատարուած աշխատանքներու եւն.:

Կ'ուզեմ խօսքս վերջացնել այս հաստատ յայտարարութեամբ: Եթէ Հայ ժողովուրդը անցնող մութ դարերուն իր կրած ազգային եւ մշակութային այլասերումէն յետոյ, 20-րդ դարու սկիզբը իր ազգային եւ մշակութային իսկական վերածնունդը ապրեցաւ, այդ շարժման նախաձեռնողը եւ մղիչ ոյժը անժխտելիօրէն Մխիթարեան միաբանութիւնն էր:

ՀԱՅԿԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՆՇԱՐԵՂ ՏԻՏԱՆԸ՝ ՀԱՅՐ ՅԱԿՈՎՐՈՍ ՎՐԴ. ՏԱՇԵԱՆ (1866-1933)

Հ. Մեսրոպ վրդ. Թոփալեան

Վիեննայի Մխիթարեան դպրոցին ուսումնագիտական օճախն ու Հայկաբանական դարբնոցը կը սիրեմ յորջորջել «Արարատ», որուն «Միս» ու «Մասիս» կատարները կը կազմեն քսաներորդ դարուն՝ Հ. Յակովբոս Տաշեան (1866-1933) եւ Հ. Ներսէս Ակիւնեան (1883-1963)՝:

Հ. Տաշեանէն նախ քանի մը կենսագրական գիծեր: Ան ծնած է Կարին (Արծաթի գիւղ), 25 հոկտեմբեր 1866, 14 տարեկանին գացած է Վիեննա որպէս Մխիթարեան դպրեվանքի սան, 14 մայիս 1885 անդամակցած է Մխիթարեան միաբանութեան եւ 25 դեկտեմբեր 1889 ձեռնադրուած կուսակրօն քահանայ:

Հ. Տաշեան քիչ ճամբորդած է:

1893 այցելած է Թրիեստ եւ Վենետիկ, 1894 գացած է Պերլին արքունի մատենադարանի Հայ ձեռագիրները ուսումնասիրելու համար, 1898 մեկնած է Պոլիս եւ Իզմիր. նպատակն էր այցելել իր ծննդավայրը, բայց չէ յաջողած:

1909-1912 գտնուած է Պոլիս իբր Մխիթարեան վանատան մեծաւոր: Այս պաշտօնավարութեան ընթացքին ալ կատարած է գիտահետազոտական ուղեւորութիւններ Կարին եւ շրջակայքը մինչեւ Խոտորջուր,

որոնց նկարագրութիւնները կը գտնենք անոր ուսումնասիրութիւններուն մէջ:

Այնուհետեւ մինչեւ իր մահը (3 փետրուար 1933) ապրած է Վիեննա, ուր երկար տարիներ եղած է Միաբանութեան ընդհանուր վարչութեան անդամ:

Հ. Տաշեան արդարօրէն կը վայելէ բազմահմուտ գիտնականի համբաւ: Ան, սկսած իր ուսանողական տարիներէն, չգոհանալով դպրեվանքի մէջ ստացած ուսումնական կրթութեամբ՝ հետեւողական ինքնուսուցումով ու աշխատասիրութեամբ դարձաւ անգերազանցելի Հայրէնագէտը՝ հմուտ եւ գիտակ ոչ միայն գրաբարի եւ աշխարհաբարի, այլ նաեւ Հայ բազմաթիւ բարբառներու, ինչպէս կ'իմանանք ոչ միայն անոր այս կամ այն երկէն, այլ նաեւ անոր գիտական թղթակցութիւններէն Հայագրի կամ օտարազգի զանազան մասնագէտներու հետ:

Ինքնաշխատութեան արդիւնք եղան նաեւ բացի գերմաներէն, ֆրանսերէն, յունարէն, լատիներէն լեզուներէն, որ դպրեվանքի ուսումնական ծրագրի մաս կը կազմէին արդէն, իտալերէն, անգլերէն, ռուսերէն, արաբերէն, ասորերէն, եթովպերէն, թրքերէն, քրտերէն, պարսկերէն, լեզուները, որոնց ծանօթութեան շնորհիւ Հ. Տաշեան կրցաւ օգտագործել օտար սկզբնաղբիւրներ, բնագիրներ ու կատարել լեզուբանական Համեմատութիւններ:

Բազմաթիւ լեզուներու գիտութիւնը դարձուցին Հ. Տաշեանը անմրցելի լեզուագէտն ու լեզուաբանը, որ կրնար թելադրանք եւ ուղղութիւն տալ իրեն դիմող գիտնականներուն: Այդպիսի դէպքերու

1 Հմմտ. Հ. Պետրոս Տէր Պօղոսեան, Դ Հ. Ներսէս Վրդ. Ակիւնեան, պատուակալ Դոկտոր Փիլիսոփայութեան 1883-1963,- ՀԱ. 78, Վիեննա, 1963, էջ 449-468, Հ. Վահան Ինգլիզեան, Հայր Ներսէս Ակիւնեան, Հայ բանասէրը,- ՀԱ. 68, Վիեննա, 1954, էջ 355-396, եւ Հ. Վահան Ինգլիզեան, Հայր Ներսէս Ակիւնեան վարդապետի աշխատասիրութիւնները,- ՀԱ. 68, Վիեննա, 1954, էջ 396-414:

շատ կը հանդիպինք Հ. Տաշեանի նամակագրութիւններուն մէջ:

Հ. Տաշեանի ուսանողական շրջանին լոյս ընծայած առաջին արտադրանքներն եղան ինքնագիր ու թարգմանական քերթուածներ «Հանդէս ամսօրեայ»-ի մէջ: Մխիթարեան դիւանէն ինծի ծանօթ են քերթողին ինքնագիր 48-է աւելի բանաստեղծութիւններ, գեղօններ ու թատերախաղեր:

Բայց 1890-1895 տարիներուն, 23-29 տարեկան վանականը արդէն որպէս հասուն բանասէր խմբագրապետն էր «Հանդէս ամսօրեայ»-ի:

Հ. Տաշեան համալսարան չյաճախեց եւ առիթ չունեցաւ ակադեմիական ուսումնառումի, այլ իր համապարփակ գիտութիւնը յարածուն ինքնաշխատութեամբ ամբարեւոյճ կրցաւ նուաճել արեւմտեան գիտաշխարհի գեներիթը:

Հ. Տաշեան «չյաճախեց բարձրագոյն դպրոցներ, բայց իր հմտութեամբ մոգեց համալսարանական ուսուցչապետներ ու գիտուններ», կը վկայէ Հ. Ներսէս Ակիւնեան՝ յիշելով որ 1894-ին արդէն Պերլինի Ակադեմիայէն առաջարկուած էր Հ. Տաշեանին ստանձնել արքայական համալսարանի արեւելագիտութեան բաժնի գրադարանապետի եւ արեւելեան լեզուներու մատենագրութեան դասախօսի պատուաբեր ու բարձր պաշտօնները²: Բայց ժամանակի քաբահայրը՝ Հ. Արսէն Այտընեան (1825-1902) մերժած էր առաջարկը:

Նկատի առնելով դասախօսութեանս համար որոշուած ժամանակի սղութիւնը՝ ես պիտի չխօսիմ Հ. Տաշեանի արդէն լոյս տեսած հայագիտական աշխատանքներու մասին. անոնք ծանօթ են գիտական աշխար-

հին: Բայց պիտի յիշեմ գործեր, որոնց մասին քիչեր գիտեն:

Վիեննայի Մխիթարեան դիւանի 10 տուփերուն մէջ ամփոփուած է Հ. Տաշեանի թողօնը, որուն կարեւոր բաժինը կը կազմեն անոր 10 անտիպ աշխատասիրութիւններն ու անթուելի թղթակցութիւնները:

Հ. Ակիւնեանի 1933-ին շարադրած մահագրութենէն գոնէ անունով ծանօթ են առաջինները, որոնց շարքին կան «Գունալուսատուութիւն. ինքնագոյն լուսանկարք Լիւմիէրի տան եւ նորագոյն կատարելագործութիւնք» (1910), «Խոտորըրոյ բարբառը» (305 էջ), «Աստուածային Յայտնութեան պատմութիւնը», «Միսագրութիւնը», «Յուցակ հայկաբանութեան մէջ գործածուած բառից», «Bibliographie Armeniaca» (տետրակ) եւ «Թաթլոյ վանանդացոյ արութիւնք» (երեք մանրագիր պրակներու մէջ տաղաչափեալ): Այս անտիպ մնացածներուն քով կային տակաւին ուրիշ կարեւոր հեղինակութիւններ ու թարգմանութիւններ, որոնք, սակայն, բախտաւորուեցան յետմահու հրատարակութեամբ:

Հ. Տաշեանի դիւանային ժառանգութեան երկրորդ ամէնէն կարեւոր պարունակն է նամակագրութիւնը, որուն որակն ու քանակը բոլորովին անյայտ են գիտաշխարհին:

Տարիներ առաջ Վիեննայի Մխիթարեան դիւանին մէջ հաշուած եմ Հ. Տաշեանէն 505 կարծ եւ երկար նամակներ ու բացիկներ, որոնք 1000-է աւելի էջեր լեցուցած են: Ստուգիւ, գիտական աշխարհի համար մեծ կարեւորութիւն ունի հրատարակութիւնը անոր բոլոր թղթակցութիւններուն, որոնք անտարակոյս առատ նիւթ պիտի հայթայթեն եւ նոր լոյս պիտի սփռեն պատմաբանասիրութեան Հսկային եւ անոր հայագէտ թղթակիցներու մասին:

Գիտաքննական նամակագրութիւնը ունի «տաշեանական ոճ»-ին համարեայ համապատասխանող մակարդակը, որով հարկ

2 Տե՛ս Հ. Ն. Ակիւնեան, Դ Հ. Յակոբոս Վրդ. Տաշեան, Մահագրութիւն, ՀԱ, Վիեննա, 1933, էջ 1-33:

չկայ երկրորդի վկայութեան կամ երրորդի մը արժեւորումին: Կը բաւէ իմանալ Հ. Տաշեանի հետ թղթակցող գիտնականներու անունները, համոզուելու համար անոր նամակներու բարձր արժէքին: Այստեղ կը գոհանամ յիշելով համբաւաւորներէն՝ Tomaschek, Conybeare, Բամաշեան, Թորգոմեան, Մրմրեան, Սարուխան, Կիւլէսէրեան, Goussen, Հ. Բ. Սարգսեան, Hübschmann, Drews, Ս. Վրդ. Պարոնեան, Մսերեան, Թօփճեան, Ն. Մառ, Հ. Յ. Թորոսեան, Karst, Խալթեանց, Strzygowski, Meillet, Մ. Վրդ. Տէր-Մովսէսեան, Հ. Մ. Նուրիխան, Bugge եւ յաճախ՝ Carrière, որոնց ղրկուած պատասխանամակներուն մէջ կը ցայտեն Հ. Տաշեանի հանճարեղ միտքն ու համայնագիտարանային հմտութիւնը: Հայկաբանութեան համարեա բոլոր մարզերը կը շօշափուին հոն, մանաւանդ թէ աւելի, պատասխան-նամակները եւ անոնց հայագիտական յարակցութիւններն ուսումնասիրողը կը յանգի այս ուղիղ եզրակացութեան, թէ հայագիտութեան կարեւոր ու լրացուցիչ նպաստ բերին եւ դեռ կրնան բերել եւրոպացի ու հայագիտ հարցնող գիտնականներու հասցէագրուած Հ. Տաշեանի հաղորդումները, գիտելիքներն ու նամակները. վերջիններէն շատերը հրատարակուած կամ անտիպ մնացած հետազօտութիւններու համառօտ ամփոփումներ կամ նախարտակներ են:

Հ. Տաշեանի անծանօթ մնացած գործերէն է նաեւ «Deutsch-armenisches Wörterbuch - Բառագիրք գերմաներէն-հայերէն»-ը (Վիեննա, 1889), որ ունի 1667 մանրագիր երկսիւն էջեր: Դժբախտաբար, ուրիշին³ անունով տպուած է այս (հաստատոր) բառարանը, որ իր տեսակին մէջ միակ բարձրութիւնը կը մնայ մինչեւ այսօր՝ հակառակ հրատարակուած քանի մը նոր բառագիրքերու»:

3 Այդ անձը՝ Հ. Աւետիք Կոյլա՝ Միաբանութեան հետաքննող, Առջն ժամանակաշրջանին վաճառի տպարանին պատասխանատու վարդապետն էր:

Տաշեանագիտութեան մէջ դեգերող ուսումնասիրողը միշտ կրնայ հանդիպիլ նորանոր գիւտերու եւ գաղտնիքներու, որոնք կամ նոր լոյս մը կը շողան այս գիտանիւթին վրայ, կամ նոր բացայայտում մը կը կատարեն այն գիտամարզին մէջ եւ կամ նոր ճշդումով մը կ'ամբողջացնեն այս ու այն տեսութիւնը Հ. Տաշեանի, կամ նոյնիսկ՝ այլ հայկաբանի մը:

Հ. Տաշեան «Հանդէս ամսօրեայ»-ի մէջ հրատարակած է 375-է աւելի մատենախօսականներ, մատենագիտական ծանօթագրութիւններ, քննադատական գրածանօթութիւններ, գրախօսական ներկայացումներ, գրական ամփոփումներ եւ գրաւոր ղեկուցումներ, որոնց ապագային մէկտեղուելիք հրատարակութիւնը, ինչպէս ալ «գրախօսութիւնն ու քննադատութիւնը «Հանդէս ամսօրեայ»-ի մէջ», բազմերես եւ օգտաշատ ուսումնասիրութիւն մը կրնան ըլլալ հայագիտութեան համարեա բոլոր բնագաւառներուն համար:

Ստուգիւ, Հ. Տաշեան է նաեւ մեծ մատենախօսողը, մեծ քննադատը՝ անմրցելի իր խորաթափանց մտքով եւ անկշռելի իր ատոք բերքով, իր բազմամարդ գիտականութեամբ ու համապարփակ հմտութեամբ:

Գոնէ 1890-1895 ժամանակամիջոցին՝ Հ. Տաշեանի գրախօսած հեղինակներէն կը յիշեմ ամէնէն անուանիները, ինչպէս՝ Հ. Ղեւոնդ Ալիշան, Ստեփան Մալխասեանց, Հ. Բարսեղ Սարգսեան, Գալուստ Տէր-Մկրտչեան, Նորայր Բիւզանդացի, A. Carrière, Friedrich Müller, Wilhelm Tomaschek, E. Teza, Heinrich Hübschmann, Fr. C. Conybeare, Sophus Bugge:

Հ. Տաշեան մատենախօսող ու քննադատ չէ միայն իր գրախօսականներուն, այլ նաեւ՝ իր երկերուն, յօդուածներուն եւ հայագիտական թղթակցութիւններուն մէջ: Ան որպէս գրաքննադատ իր ժամանակէն առաջ էր իր արդիական մտածողութեամբ, իր լայ-

նատես գիտականութեամբ եւ իր խորաքնին ուժականութեամբ:

Հ. Տաշեանի բոլոր ուսումնասիրութիւններուն մէջ կը տեսնենք ոչ միայն կրկտող, համեմատող, ստեղծագործող, բազմաճմուտ ու համապարփակ հեղինակը, այլ նաեւ ամենատես, խստադատ, անաչառ ու գիտական մատենախօսը:

Հ. Տաշեան չեղաւ միայն հայ ձեռագրագիտութեան հիմնադիրը, այլ նաեւ գրաքննադատական մտքին հաստատողը: Ան քննադատութիւնը սովորական ընթացքէ, խժքժանքէ ու հայհոյանքէ բարձրացուց գիտական մակարդակի, առարկայական գիտութեան եւ արտայայտչական ազնուագրութեան:

Հ. Տաշեանի՝ գրախօսողին ու քննադատին արժանիքներէն կ'ուզեմ յիշել անոր ամբարած գիտութիւնը, անկողմնակալութիւնը, առողջ դատաստանը, յստակ վճարձակումը, առարկայականութիւնը, ամբողջականութիւնը, վայելչագրութիւնը կամ նրբանկատողական ոճը եւ լեզուն:

Ստուգիւ, Հ. Տաշեան քննադատին դիտաւորութիւնը չէ այսպանել հեղինակ մը, այլ՝ լոկ ուղղել, չ'ուզեր սեւագրել հեղինակութիւն մը, այլ՝ լոկ սրբագրել: Ան չգրախօսեց քննադատելու համար, այլ՝ քննադատեց բարձրացնելու եւ փարթամացնելու ուղղամտութեամբ:

Քաղաքավար ու քաջալեր Հ. Տաշեան գրախօսողը, սակայն, դարպասող չէ, երբեք, քանի ի հարկին կ'ըսէ իր հատու խօսքը, առանց կտրելու եւ խորտակելու: Անոր նպատակն է ծանօթացնել, ներկայացնել, ուղղել, բարձրացնել, ճոխացնել հայկաբանութիւնը: Անոր գրախօսական լեզուն կամ գիտաքննադական ոճը ազնիւ, բարեկիրթ, փափկանկատ ու դրական է, որ քիչ անգամ կը տեսնուի հայ քննադատութեան պատմութեան մէջ:

Ըստ Հ. Տաշեանի գրախօսողն ըլլալու է միշտ համարձակ, անկեղծ եւ անաչառ,

բայց ո'չ երբեք՝ անձնական, անգոսնող ու վարկաբեկիչ:

Գիտաքննադատը մնալու է յար խորաքնին, խստապահանջ, համապարփակ ու սխալացոյց՝ ուղղելու, բարձրացնելու եւ շինելու, բայց ո'չ երբեք՝ պախարակելու, ստորագնահատելու եւ քանդելու համար:

Հ. Տաշեանի տեսութիւններով քննադատը «կ'ուսումնասիրէ ... լաւը յոռիէն, սուտը ճշմարտէն զատելու համար: Գիտութիւնը անողոք է եւ այսպէս ալ ըլլալու է, եթէ չ'ուզուիր վէպերով եւ առասպելներով սնանիլ»⁴: Հետեւաբար, «զուտ գիտական ասպարէզի մէջ պէտք էին միայն ասացոյցները խօսիլ»⁵: Գիտաքննադատը պիտի ջանայ «ամէն նոր ասացոյց կրկին ու կրկին քննել, կշռել անոր արժէքը, եւ ըստ այնմ մերժել կամ բարեփոխել: Բայց միայն գիտական անաչառութեամբ, առանց յուզման ոգւոյ եւ ցած կրից՝ ճշմարտութիւնը փնտռելով, ուր որ ալ գտնուի...»⁶:

Հ. Տաշեան, որ լաւատես, բայց նաեւ իրապաշտ մատենախօսն է եւ իր քննադատութիւնը կը հաստատէ օրինակներով ու փաստերով, միշտ կը գիտակցէր իր կատարած դերին օգտակարութեան. «Եթէ այլեւայլ թերութիւններ մատնանիշ ընելու ջանացինք, յօգուտ գրքին էր՝ յուսալով, որ մեր քանի մը դիտողութիւնքն առիթ կու տան հեղինակին իւր գործին այն մասերն աւելի բարեփոխելու: ... մեր քննադատութիւնը մի գուցէ կամաւոր պարսաւ մը համարուի, մինչդեռ մեր դիտումն էր գրքին կատարելութեան հանգանակել»⁷:

Նպատակին ու դիտումին ի խնդիր՝ գրախօսող ու քննադատ Հ. Տաշեան «միշտ

4 Հ. Յ. Տաշեան, «Մովսէս Խորենացու Հայոց Պատմութիւն, աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց Խորեն եպ. Ստեփանէ, Պետերբուրգ, 1897».- ՀԱ, 1898, էջ 261բ:
5 Նոյն տեղում, էջ 261ա:
6 Նոյն տեղում, էջ 261բ:
7 Նոյն տեղում, էջ 267ա-բ:

հակառակ եղաւ գիտազուրկ բանակուհներու, կամ աւելի ճիշդ՝ անձնական բնոյթ առած եւ վիրաւորական գրչապայքարներու: Իր այս հաստատ աշխատելակերպն ու անդրդուելի համոզումը յաճախ լսելի ըրաւ իր գրութիւններուն մէջ»⁸:

16 մարտ 1892 թուակիր նամակին մէջ ան կը գրէ Հ. Յովհաննէս Թորոսեանին. «...Իմ եւ ամէնուն սկզբունքն այն է, որ ազատ է ամէն ոք գիտութեան մէջ իւր կարծիքն յայտնել նաեւ ամենասիրելի բարեկամին դէմ, ինչպէս եւ՝ օրինակներ քիչ չկան ծանօթ եւրոպական գիտնոց մէջ»⁹, «պայմանաւ», ինչպէս ան կը շեշտէ Սուքիաս Վրդ. Պարոնեանին 21 յունիս 1900-ին գրած պատասխանին մէջ, «որ գիտական շրջանին մէջ մնան եւ ըստ կարելոյն՝ հանդարտ եւ վայելուչ ոճով գրուած ըլլան թէ՛ թեր եւ թէ՛ դէմ գրուածքներ»¹⁰:

«Հայկաբանութեան հանճարեղ տիտանը՝ Հայր Յակովբոս Վրդ. Տաշեանը», ամբողջապէս ներկայացնելու համար եթէ բազմահատոր աշխատասիրութիւն մը չի կրնար բաւել, ապա ինչպէ՞ս կրնայ գոհացնել 15 վայրկեանի բանախօսութիւն մը, որուն տիտանեան Հերոսը ոչ միայն «մեր ժամանակին մեծագոյն հայ բանասէրն էր» (Առաքել Սարուխան) եւ «փառքը ու պարծանքն եղաւ հայ բանասիրութեան» (Բաբգէն Կաթողիկոս Կիւլէսէրեան), որուն «կը պարտի հայ քննադատական ոգին իր վերագարթնումը, հայ բանասիրութիւնը՝ իր եւրոպական կաղապարի վրայ նորաձեւումը, հայագիտութիւնը՝ արեւմտեան գիտութեան ծանօթութիւնը եւ հայ նոր սերունդը հայագիտական ուսումներուն անյատակ ծովին մէջ նաւելու գիտութիւնը» (Հ. Ն. Ակիսեան),

8 Մ. Հայունի, Հ. Յակովբոս Վրդ. Տաշեան՝ գրախօսողն ու գիտաքննադատը, Այնճար, 2011, էջ 226:
9 Վիեննայի Մխիթարեան Դիւան, Տաշեան Հ. Յակովբոս, տի. 9, թիւ 34:
10 Նոյն տեղում, տի. 9, թիւ 8:

այլ նաեւ «Տաշեան կենդանի ապացոյց էր մեր ցեղի գիտական մեծ կարողութեանց: Իր գործերը բանասիրական աշխատանքի դպրոց եղան մեր սերունդի համար եւ ստուգուած փաստերու անսպառ շտեմարան: Իր աշխատանքին որակը հաւասարում է հայ բանասիրութիւնը եւրոպականին: ...Ինձ համար նա միշտ եղաւ վիպական հերոս, որ տանեակ տարիներ մեծ հմտութեամբ փաստում էր անշքացած հայութեան գիտական անվիճելի կարողութիւնները եւրոպական մարդկութեան առջեւ եւ պարտադրում էր նրան յարգել այն ազգը, որի զաւակն էր ինքը» (Նիկոլ Աղբալեան):

«Հայկական սովետական հանրագիտարան»-ին համար՝ «Տաշեան Յակովբոս (1866-1933) հայ բանասէր, լեզուաբան, հայագէտ» է լոկ¹¹, իսկ ժամանակակից Մխիթարեան դրամագէտ-ձեռագրագէտ-մատենագէտ վարդապետին բնորոշումով՝ Հ. Տաշեան է «բանասէր, ձեռագրագէտ, պատմագէտ, լեզուաբան, լեզուագէտ, դրամագէտ»¹²: Ասոնց վրայ կարելի է դեռ աւելցնել իրարմէ բոլորովին տարբեր մակդիրներ՝ բնագէտ-տարրաբան, ծիսագէտ-աստուածաբան եւն. որովհետեւ ան իսկապէս համայնագէտ մըն էր:

Այս բոլորէն վերջ զարմանալի պիտի թուի, եթէ ըսեմ, որ Հ. Տաշեան ընդհանրապէս վատառողջ ու հիւանդոտ եղած է: Մեր երիցագոյն վարդապետները կը պատմեն, թէ անոր գրասեղանին կէսը ծածկուած էր դեղորայքով:

1915-ի Հայոց ցեղասպանութեան սահմակեցուցիչ լուրերն ու հատուկ ղեկավարող ցնցեցին գերզգայուն ազգասէրին սիրտը՝ կտրելով անոր աշխատանքի թափը:

11 ՀԱՀ 11, Երեւան, 1985, էջ 571բ:
12 Հ. Օգոստինոս Սեբուլեան, Հանդէս Ամսօրեայի յօդուածներու 100 տարուան մատենագիտական ցուցակ 1887-1986, Վիեննա, 1990, էջ 316:

1925-ին կորսնցող իր աջ քրին լոյսը եւ միշտ վախի մէջ էր, որ իր ձախն ալ նոյն վտանգին ենթարկուէր:

Կ'ուզեմ վերջացնել խօսքս Վիեննական Մխիթարեան այլ տիտանի մը՝ Հ. Սահակ Եպս. Կոզեանի (1895-1963) բառերով, որ Հ. Տաշեանի վախճանումին բօթն առնե-

լով՝ Բուկարեստէն, 9 փետրուար 1933-ին, կը գրէր Հ. Մեսրոպ Հապոզեան (1887-1974) Աբբաժօր՝ Հանգուցեալը կոչելով «Մե՛ծն, պատիւ մեր եւ պսակ», ինչպէս նաեւ՝ «Շտեմարանն» ու «Ծառն»: Ապա, կը թելադրէ. «Ջանք դիցուք եւ մեք նմանող նորա վարուցն եւ բարուցն լինել»¹³:

13 Մ. Հայունի, Գերպծ. Դոկտ. Հ. Սահակ Եպս. Կոզեան. Դիւանայիճ երկասիրութիւն, Այնճար, 2008, էջ 364:

ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ ԿՐԹԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ

Հայր Սերոբ Չամուրլեան

Մխիթարեան միաբանութեան Վիեննա Հաստատուելու 200 ամեակի տօնախմբութեան շրջանակներում, երբեք զարմանալի չէ, որ մեր ուշադրութիւնը սեւեռենք նաեւ Վիեննայի Մխիթարեան միաբանութեան կրթական առաքելութեան՝ եւ դպրոցներուն վրայ:

Արդարեւ, «երբ Վիեննական Մխիթարեաններու Իսթանպուլի կրթական գործին վրայ կը խօսուի, իբրեւ սկզբնաւորութիւն նկատի կ'առնուի 1825 թուականը: Իրականին Վիեննական Մխիթարեան Հայրերու գործունէութիւնը սկսած է 1811-ին, Իսթանպուլի արուարձաններէն Գանտիլլիի մէջ ամառնային դպրոցով մը եւ նոյն տարւոյն նոյեմբեր 19-ին բացուած է ձմեռնային դպրոց մը՝ սեպհական Հոդի վրայ, Պէյօղլուի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ մօտ»¹:

Սակայն աւելի վաղ ժամանակներէ սկիզբ կ'առնէ Մխիթարեան կրթական առաքելութիւնը եւ դպրոցներու գործունէութիւնը, յարաճուն թափ ստանալով, ազգային գիտակցութիւն եւ տուեալ ժամանակ մրձակցութեան անհրաժեշտ գիտելիքները հաղորդելով Հայ Հասարակութեան Համեստագոյն ներկայացուցչին անգամ:

Սկիզբնաղբիւրը՝ անձամբ Հիմնադիրն է, Մխիթար Սեբաստացին, որ ամբողջ կեանքը նուիրեց սերունդներ դաստիարակելու գործին, ոչ միայն իր ձեռասուն աշակերտներուն, այլ ամբողջ Հայ ժողովուրդին՝ գրահրատարակչութեան միջոցով: Այս

դաստիարակութեան հիմք կը կազմէր Դաւթի Սաղմոսը, Քրիստոնէական վարդապետութիւնը, բարի վարքը, աղօթքը, քերականութիւնը, բառգիրքը: Ասոնցմէ իւրաքանչիւրը կը Համապատասխանէ Մխիթարի հրատարակած մէկ աշխատութեան: Բնականաբար, միայն սրտացաւ դաստիարակը կրնար մտայղացումն ունենալ ամէն գնով սորվեցնելու Համար՝ Հայաստաւ տաճկերէն գիրք հրատարակել: Մէկ խօսքով, Մխիթար իր սրտին մէջ կը կրէր իւրաքանչիւր Հայորդի եւ հեռաւոր Վենետիկի ափերէն կը փորձէր ջամբել գիտութիւն, լուսաւորել միտքն ու հոգին:

Այդ իսկ պատճառով, երբ Եղիսաբէթուպուլսէն հրաւէր կը ստանայ վարդապետ տրամադրելու կառուցուելիք դպրոցին Համար, յանձն կ'առնէ «ի սուրբ գործդ յայդ»² երկու վարդապետ տրամադրել, եւ 1746-ին սկիզբ տալ այդ «Հոգեշահ բարեպաշտական գործս, ի փառս Տեառն»³:

Այս առիթով Մխիթար յորդորական նամակներ կը գրէ իր երկու վարդապետներուն, Հ. Ղազարոսին եւ Հ. Մարկոսին, ուր տարբեր անգամներ, ուղղութիւններ ցոյց կու տայ, եւ մենք կարող ենք Մխիթարի Համոզումներուն ծանօթանալ:

Առաջին եւ կարեւորագոյն Համոզումը՝ միաբանութիւնն է. «Երկոքինդ իբր միով հոգով եւ առ միմեանս խոնարհութեամբ եւ Հպատակութեամբ զգործն յառա-

1 Պօղոսեան, Հ. Եփրեմ Վրդ., Համայնապատկեր Վիեննական մխիթարեան հայրերու կրթական գործունէութեան, հտ. Ա., Իսթանպուլ 2008, էջ 81:

2 Լամականի, Առ Հ. Մարկոս - Պաշվալով, 22 Հոկտեմբեր 1746, ԳՄԿ, 855, տող 23:
3 Նոյն, Առ Հ. Ղազար - Պաշվալով, 15 Հոկտեմբեր 1746, ԳՄԿ, 851, տող 6-7: